



# ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, Շաբաթ օրերը .

Հասցէ՝ Կ. Պոլիս, Ղայաթիա հրատարակչան խան :  
Զեռքէ կը ծախուի հատը 40 փարսյ :

Բաժանորդագրի

Պոլիս, տարեկան կէս օսկի, վեցամեայ թուգ. օսկի		
Դաւան. »	70 դահեկ	35 քճկն.
Թոտր երկ. »	12 ֆրանք	6 ֆրանք.

ԿՈՏԱՆՔՆՈՒՊՈԼԻՍ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ

### ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներքին բարեկարգութիւն պէտք է մեզ, ներքին կարգութիւն. լալոնական բայց պերճախօս այս բանածեւը կը գրէ հայ լրագիրը, զայն կ'արտասանէ հայ ծերունին, և աղուամաղ այտերով պատանին կըր կ'ուչէ երեւի խորունկ քաղաքագէտ՝ զլուխը ծանր ծանր երեքնեւով կ'ըռէ. Ներքին բարեկարգութիւն պէտք է մեզ, ներքին բարեկարգութիւն : Տ. Ներսէս Պատրիարքի պաշտօնավարութեան վերջի օրերէն սկսեալ այս երգը կը նուազեն և սակայն ի՞նչ կը տեսնենք մեր չորս կողմը, ո՛չ միայն ներքին նորանոր բարեկարգութիւններու նշոյլ մը չենք նշմարել, այլ խանգարուած ամէն ուրեք : Եւ ինչո՞ւ՝ վասն զի ոչ ոք որոշ գաղափար մը ունի թէ ի՞նչ պէտք է հասկնալ ներքին բարեկարգութիւն ըսելով . ո՛չ ոք ծրագիր մը պատրաստած է, ո՛չ ոք խորհած է մեր եկեղեցական, կրթական եւ նմանօրինակ խնդիրներու վիճակի վրայ .

Սակայն որոշ գաղափար մը ունենալ, ծրագիր մը պատրաստած ըլլալ բանական չէ . զի կարելի է որ անհատ-

ներու գրասեղաններու մէջ ծրագիրներ ալ գտնուին, եւ զլուխներն ալ լեցուած ըլլան տեսակ տեսակ գաղափարներով . բարեկարգութեան մը առաջին պայմանն է ունենալ պետ մը որ ինք զգացած ըլլայ բարեկարգութիւններու հարկն, եւ բաւական խելք ու կամք ունենայ այդ բարեկարգութիւնները ներմուծել տալու ազգային գործերուն մէջ . բնական է որ մեր մէջ այդ նշանակեալ պետը մեր Պատրիարքն է . վասն զի ժամանակ ունի, գործերը գիտէ, իշխանութիւն ունի՝ որ կենսական պայմանն է բարեկարգութիւններն յաջողակելու, — եւ վերջնապէս քանի որ Պատրիարքը ընտրուած է, կ'ենթադրենք որ բացառիկ կօրողութիւններով օժտուած պէտք է ըլլայ : Տ. Ներսէս Պատրիարքի գաղափարներն յայտնի են . Տ. Յարութիւն Պատրիարք միայն նրուստից մը մտածեց, իսկ այժմ ամէն աչքեր յառած ի Տ. Յորէն Պատրիարք, Կուանը շատ պատշաճաբար է, վասն զի ամէն ոք բարեկարգութեան կը բաղձայ եւ ամէն ոք տրամադիր է աշակցել Պատրիարքին—ինչ որ թիչ մը շփոթութեան տեղի պիտի տայ :

Ոնչիրը Պատրիարքին վրայ է . կամք ունի՞ Պատրիարքը . կարող է՞ . Այս կարցումներու պատասխանն այն է նախ թէ Տ. Յորէն Պատրիարք փափաք ունի բարեկարգութիւններով օժտուել զմեզ . իսկ թէ կամք ալ ունի՞, այդ ալ նորին Սըրո-

# ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ



բազմութիւնն ինք գիտէ, և փափաք Աւնեցողը պէտք է կամք ալ ունենայ:

Կարող է՞, Անոնք որ աւելի ծառայ տեղեակ են Ս. Պատրիարքի գաղափարներուն կը հաւաստեն թէ նորին Սրբազնութիւնն իր մենաստանին մէջ միայն ազօթելով կամ լոկ կարդալով ժամանակ անցուցած չէ: շատ խորհած է ազգին վիճակին վրայ և գիտնալով թէ ամէն եկեղեցական (ամուրի) որ մը կրնայ կոչուիլ իշխելու ազգին ճակատագրին վրայ, ուսումնասիրած է, մտածած է, և ունի իրեն յատուկ գաղափարները:

Եւ արդարեւ կը տեսնենք որ Ս. Պատրիարքը սկսած է ձեռնարկել այդ բարեկարգութիւնները բացառանջութիւններու թատերաբեմէն իրականութեան շրջանակին մէջ անցունելու:

Պէտք է սպասել եւ տեսնել թէ Արքայազն Պատրիարքն ինչ ծրագիրներ պիտի ներկայէ Ազգ. Ժողովի, եւ այն ատեն միայն կարելի է գիտակցութեամբ խօսիլ:

Եւ սակայն ե՞րբ պիտի գումարի Ազգ. Ժողովը.— Հաւանական կը թուի որ դեկտեմբեր 16ի աւրաթ օրն ի նիստ հրաւիրուի Ազգ. Ժողովն եթէ ո եւ է գիտողութիւն չ'ըլլայ: — Կը լսենք թէ Խառն Բողովը որոշեր է Ազգ. Ժողովին գումարման համար տասն եւ ինը տարուան սովորութենէն շեղիլ: — Ի՞նչ կրնանք ըսել: Այս նիւթերուն վրայ առ այժմ խօսիլ կարելի չէ: սպասենք քիչ մ'ալ եւ աւելի գիտակցութեամբ կը խօսինք:

Միայն թէ պէտք է ուշադրութենէ չը վրիպել որ ի՞նչպէս Քալ. Ժողովը չորս հինգ ամսէ ի վեր հետազնտէ Ազգ. Ժողովը երկաթէ շրջանակի մը մէջ սեղմելու հետամուտ է: այս մտանալու չէ:

## ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ



Ի լրջ կ'իմանանք թէ կրօնական յօդովը ՎՄԱԿԻՅԻ ազգաբարոյութիւն մը զգած է, եթէ այս շաբթու ընդունինք այդ ազգաբարոյութիւնն յաւերջ թուով կը խօսինք:

Արիական եղբք. — Ղարիբ ճամբորդութիւնը. — Գիւղիս անսար, անը և նոր գող մը. — Կրկն-խառնութիւնք. — Կարօ և իր ծերուկ ծոցք. — Տիրութիւն. — Սեւ թուղթեր. — Մտնօ:

Սղանակաց մէջ մի միայն աշունն է, յորում զարիպի կենացն ու տանը մէջ տըրտմութեան հետ ուրախութիւն կը խառնուի ըսա մասին: Աշունն անոր ըղձիցն ու ակնկալութեանց եղանակն է: Հազիւ թէ տրեւները դեղնած կը թափին, շոգեհասը կը բառնայ մեր երջայրներն և կը թափէ սախական եղբք, Սամսոն, Կիրասոն և Տրապիզոն: Ո՛րչափ բերկրութեամբ աշնան վերջին օրերն ոտք կը դնէ Ղարիպն այն ցամաքին վրայ, որուն հրաժեշտ տուած էր, չգիտեմ՝ քանի՜ տարիներ առաջ, ծաղկանց ամառն մէջ՝ գուցէ անյոյս եւ վշտաբեկ: Ո՛վ կարող է սահմանել այն հողեկան տպաւորութիւնը՝ զոր կը կրէ յանձին այն մարդն մինչ աչքերը վերամբարձ՝ կը դառնայ սախական ցամաքէն դէպի արեւմուտք, եւ կը տեսնէ որ արեգակայն յետին բոցերը կը մարմրին իւզանդիոնի վրայ, Այն օրը, յիրաւի, նոր մարդ է նա:

Եւ սակայն՝ ո՛րչափ օրեր պէտք են: Դանդաղ տարիներն անարտուելի եւ անձանձորոյթ անցուցած է Կ. Պոլսյ սաւա-յասակներու և մթին խորշերու մէջ: Իսկ այժմ, տարիներու շափ ծանրութիւն ունին կարճուկ օրերը. տան սէր, ծնողաց սէր, կնոջ եւ որդւոյ սէր, սարի եւ սորի սէր, ամէնքն ալ կը դարձնուեն ցաւերով ընդամայնեալ կուրծքին տակ: Ի՞նչ, — զարիպն ալ սիրտ ունի եղբք:

Մէկ օր միայն՝ Հերիք է Սեւ ծովէն կրած տառտալանքները մեղմելու: Ուստի երկրորդ օրը, տակաւին ազօթարանը չը բացուած, կարաւանը ճամբայ կ'իջնէ: Հոս ունի զարիպն մեր Պետրոս Կաթուղիկոսի գետակն՝ ընդ որ վերջին անգամ անցած էր, հոն ունի ըլլակի մը՝ ուսկից առաջին անգամ ի մանկութեան նշմարած էր Սեւ ծովը, այդ կապոյտ երկինքն՝ կապոյտ երկինց տակ: Սակայն ի՞նչ ընեմ ասոնք: մէկն ունի երեսօրեայ, և միւսն՝ կիսամսեայ

ճամբորդութիւնս Դու տեսնո՞ր ես, սիրելիս Արփիար, Տէրսիմի եւ Բարձր Հայոց խորերն ու սարերը : բարձունք՝ որ ամպերու կը կցուին, անդուռններ՝ որ դժոխոց կը մտնին : մէկ սրուայ զառի վայր : մէկ որուայ զառի վայր : Եւ սակայն կ'անցնի ընդ ջար եւ ընդ փուշ : Արեւելքն ունի իր ըզձիցն ու ճամբորդութեան կողմնացոյց : Եւ գէթ երկինք նպատաւոր ըլլար : Օղբ ցրտին է : դետինը տղմտ, ձիւնն ու անձրեւ անընդհատ կը տեղան երբեմն : անպատասխար կը քալէ անձ տիղմերէն ու անձրեւէն թաթխուած, ինչպէս կը տեսնենք սողորաբար մեր պանդուխտները Հոս անձրեւոտ օրեր : Մերեր ալ կան անոնց մէջ : մեր Պողոս աղբարն 65 տարեկան էր երբ վերջին անգամ, գաւազանին վրայ կրթնած, Տէրսիմի լեռներն անցաւ քալելով : Հրէից Մովսէսէն աւելի հաւատաք ունէր, եւ հասաւ իր պայտերու երկիրն ու դպնալու տուն : Գիշերներն ստիպեալ է ծառերու քուաց տակ կձկուել, դու ըսէ պատասպարուիլ, եւ դուն ուրեք գոմերու մէջ, որոց կողտ ու կոպիտ տէրը, իր եղան կամ գոնշուն քով, յանձն չ'առնուր շատ անգամ անկիւն մը տալ մեր զարիպին՝ հոն գիշերօթելու համար : Առտու քայլէ, իրիկուն քայլէ, քայլէ ու քայլէ : եւ ահա օր մըն ալ տաժանելի ճամբան կ'սպառի : վերջին քայլն, եւ ահա զարիպին կարաւանը կը գտնուի երկու լեռանց մէջ բարձունքներու վրայ, ուրկէ վար է ամէն բան : Օրուան վերջին վայր կեանները կը մեռնին ժամացուցին սուր պաքին տակ : գիւղն է՝ կ'երեւել, ծուխն է՝ կը բարձրանայ : Երկար շնչառութիւն մը մնալով թոքերէ : « Օրնեան՛ է Աստուած » : Այդիներն ու ծառաստանը կ'երեւին, եկեղեցոյ կամարն եւ կամ վանքի կաթնուղիկէն, որ մեր գիւղերը կը պահպանեն : Հոս ընկուզենին իր մերկ ստերը օգին մէջ կ'երկարէ, հոն կաղամախին կ'երերայ հիւսիսին առջեւ : անդին սպիտակ մեան վրայ իր սեւ թեւերը կը պարզէ խաջը գերեզմաննոցին մէջ, ասդին Սուրբ Կիրակոսի, Աւուսիս տիկնոջ, Ս. Յակոբոսի եւ Ս. Սարգիս քարապետէն մատուռները գիւղը կը շրջապատեն :

Եւ սակայն նոր դող մը կ'սկսի : Գիտեսն թէ ի՞նչ է այն — մին կը խորհի ա-

կամայ թէ պիտի գտնէ՞ որջ այն ամեն անուաններն՝ զորս իրեն զրկուած թըլթեբուն մէջ կը կարդար, եւ որք շատ անգամ կը նշանակուին զարիպին սիրտը խաբելու : պիտի գտնէ՞ իր սրտին հատորիկ մեծցած զարգացած, զոր, իր մեկնած ատեն, թողած էր որբանի մէջ պիտի գտնէ՞ իր մանկամարդ կինը՝ ընդ որում հազիւ չորս ամիս կենակից եղած էր : պիտի գտնէ՞ . . . — «Մի՛ վախնաք, տղերք, Աստուծով ամենքն ալ որջ են » : Խեղճ մարդիկ, Աստուծով ի՞նչ չեն : Աստուծով աղքատ են, Աստուծով զարիպ են, Աստուծով կի՛շտ ունին եւ տառապանք ունին : Հազիւ թէ այս խօսքերը կը մարին օգին մէջ, հրացաններու պայթիւնը կ'որոտայ խորերուն մէջ : նոր բոց մը արեւմուտքէն դէպի արեւելք՝ գիւղին հորիզոնը կը պատռէ : Ռազալ գիւղն է՝ կը խռովի, կը խայտայ : Ահա տղերք եկան : Ավ վաղու վաղոցի : ծերուկըն ու պառանն ալ կ'ողբերին : խուռն բաղմուխիւնն ընդ առաջ կը վազէ : մեկուն քոյրը, միւսին՝ եղբայրը, ասոր մանկիկն ու անոր մայրը, բայց ո՛չ մէկուն կինը՝ որում գիւղական պատշաճութիւնը թոյլտուութիւն չ'ըներ : կարելի՞ է բացարեւ այն զրկախառնութեանց խորութիւնն ու քաղցրութիւնն երբ իրար կը խառնուին ճամբորդներն ու գիւղացիք : մէկուն կ'ըսեն : Ահա մանկիկդ : միւսին կ'ըսեն : Ահա առիկ եղբայրդ : Արդեօք քանի՞ անգամ պէտք եղած է ըսել մօր մը թէ « ահա զաւակդ », որ մանուկ մարդ մեկնած էր եւ այժմ կը դառնար պիտերն ոլորած եւ կտրիճ դարձած, եւ ուրիշ մըն ալ անդին յուշիկ կը քայլէ պէւտրած, կորագրամակ, որ կարիճ պանդուխտութեան եղած էր : Չ'ընն, Քո՛սն, Չ'ընն, Տըլն, Մոր՛սն իրենց տէրերը մոռցած չեն, եւ ամբոխին մէջ մէն մի իր տիրոջ՝ ստիցը կը փարի՝ կաղկանձելով, առատ երերցնելով :— Ո՛ր է, կարօ, քե՛սք քե՛սք, դու մարդ չ'ունիս, հայր չ'ունիս, մայր չունիս : իր խօսեցեցելն մայրն եկած է միայն եւ խըրոխտ գոռոցու թեամբ կը դիտէ իր կարծիքսացուն, որուն այս անգամ պանդուխտութիւնը՝ իր բալոր դառնաթոյն զօրութեամբն՝ ազդեցութիւն չէ ըրած :

Հազիւ լըրացաւ շունն հինգ տարիս,  
 Մ:բոսոյ ինչ բուսան երեսս ու ծնտօսիս :  
 Թընդերէս կարմիր վարդեր կը կաթի,  
 Ջիւղերս ամօր՝ ասեւ երկաթի . . . :

Իր հաստարիքն ալ, Չահ, զոր Կարօ  
 խնձանց երբ կ'որոհի էր, վզվազով կը  
 քծնի : Կարօի նամբուն անկնիւնօք կըստա-  
 ղէ թարմ սիրտ մ'ալ, իր խօսեցեալը,  
 Սառա . և ո՛ր էր թէ Տրագնեբու լոյսն  
 հնարաւոր ընէր, դրան ետեւէն, տեսնել  
 անոր երեօն : Ուր ուրեմն՝ խօսելով, հար-  
 ցուցաներ ընելով, խնդութեան արցունք-  
 ներ սրբելով՝ ի տուն կը մտնեն . տուն  
 կը մտնէ Կարօ . հոն են իր ծնողք . Հայրն  
 սպիտակ մօրուօք ծերունի է, որ՝ ի լուր  
 աւետար որ դարձի իր միակ որդւոյն, հա-  
 զիւ սողալով մինչեւ գուռը կարող եղել  
 է հասնիլ : մայրը զսուամ, բայց համեմա-  
 տաբար նուազ տարէց, որ կարող էր տա-  
 կաւին ուր-ը եկել, իր ծերուկ ամուսնոյն  
 օգնել : Վա՛շ, տեսնէիր, Արփիար, խըն-  
 դութեան արցունքն՝ որ շրջած ու ցամ-  
 բած աչքերէ, թառամ այտերու վրայ կը  
 կաթկթին, և անտի կը զլորին Կարօի  
 հօր սպիտակափառ մօրուաց թելերուն  
 վրայ . տեսնէիր զսուամ մօրկան կարկամ  
 գիրկն ու գորովոյ խանդաղատանքն սառ-  
 նամանուտ կենաց յետին վայրկեաններու  
 մէջ՝ որք տակաւ կը մարին անզարձ վեր-  
 ջալուսիս տակն : Ծրարներ կը վառին, սիր-  
 տերը կը վառին, վառարանին մէջ բոցը  
 բարկածայթ կը ճարճատէ : Առ սլո՛մ Գրէ  
 չկայ . ամենքն ալ անցան . ալ դարիւր չը  
 կայ, սրտի ա՛ի չկայ . և կը մտնցուն՝ գու-  
 ցէ մինչեւ գարուն երբ սառն ու սառոյց  
 հալին մեր ալեւոր լնուներէն, թէ

«Մնո՛ղ, ազգականք՝ հեռու ինձանից,  
 Հուսնին նայելով, ձեր ոչնր յիշելով .  
 Ծարաբ, ե՞րբ կըլի, որ ես ձեզանից  
 Իմ կարօսս ասնեմ, ձեզ ջան ասելով :

Ծարաբ ձեր ճըտով մէկ օր էլ կընկնի՞՞՞  
 Ծարաբ ձեր երեսն մէկ օր էլ կը տեսնի՞՞՞ .  
 Ծարաբ ծուկ ծընկէ տըված՝ ձեզ կասի՞՞՞,  
 Ա՛յ իմ խեղճ ծընողք՝ ձեր ջանին մեռնիմ :

Ահաւասիկ այդ բաղձայեալ ցրն ու  
 Ժամերն, որ մեր պանդխտին կենաց մէջ  
 քիչ անգամ կը նորոգուին՝ կարասը միւտ  
 կարօտ մնալով :

Թ՛մզ ասոնք իրենց գգուանքներն ու  
 գարովոյ քաղցրութիւնը վայելին : մեք  
 քարենք ուրիշ գուռներ ալ : Ընէ՛ք սա  
 ծերունի հօր թէ ի՞նչու սրտմած է . հար-  
 ցուցէ՛ք սա նորատի կնոջ թէ ի՞նչու տըլ-  
 րած է . — Ա՛խ, շատեր գրած էին որ  
 այս աշուն Աստուծով հայրենիք կը դառ-  
 նան, բայց քիչեր եկան . վերջին «Կնի-  
 ներն երեւցան, արդէն մեր ձմեռն ալ  
 հասած է, և բազում ակնկալութիւնք ի  
 գերեզ ելան : Ծերունին յոյս չունի որ  
 ձմեռն ողջամբ անցնելու կարող պիտի ըլ-  
 լայ . նորատի կինն ալ ահաւոր պատրանք  
 կրեց ծիրանեփայլ յուսոյն մէջ : կը տես-  
 նէ՞ք այդ սեւ թուղթերն ալ որ գաղտ  
 դողդալով ձեռքէ ձեռք կը սողոսկին, և  
 ոչ ոք կը համարձակի իրենց հասցէին զըր-  
 կել վայն, Գիտեսս ի՞նչ են ասոնք . —  
 Մանօ թաղեր են հոս, Չաքարը Տրապի-  
 զոն մեռել է հազիւ ծովէն ազատած . Ս .  
 Հան չկայ, Օհաննէս չկայ, մէկ գիւղի  
 սողալներ, որոց երիցապոյնն էր 45 և  
 կրտսերապոյնը 18 ամեայ : Վա՛խ, վա՛խ,  
 հազար վա՛խ :

Գիշ մը պի՛նդ կեցիր, քահկենք այդ  
 Ծալլուած թուղթերէն մին, որ տակաւին  
 արցունքօտ է :

«Բրիստոսի ծառայ Ակօէն շա՛տ բարեւ  
 մօրս Մագօին (Մարգրիտ), եղբօրս Թա-  
 դէին, հարաներուն, սողոց ու ճգերուն,  
 բուրեբուս, մեզ հարցնող ամեն դրացնի  
 ու բարեկամաց :

«Բերանս վրայ չերթար որ ըսեմ . բայց  
 ի՛նչ կարող ենք ընել . Աստուծոյ կամքն  
 է . Մանօ այս աշուն մտնելէն ի վեր՝ կը  
 հազար ու կը հազար . մէկ օր հեռի տեղ  
 մը գործի գացել էր . իրիկունը, բանթո-  
 ղէն ետքը, ճամբան անձրեւի բռնուելով՝  
 Ըրբ իրո՞՞մ եղել էր : Նոյն գիւղեր շա՛տ  
 հազաց, և ատտուն երբ ձայն տուի որ  
 արթննայ գործի երթայ, չուզեց անկող-  
 նէն շնել : Ի՞նչ ունիս, Մանօ զ՛՛սցալուս  
 Կուշտու կը ցաւի . վրաս հու չ՛կայ : Երկու  
 օր անցաւ . շա՛տ ուղիցնի՛ս որ Փրկիչն եր-  
 թայ, դժո՞ւարութեամբ յո՛նչ սառու իրի-  
 կունն եկայ . Մանօ քալելով գացեր էր :  
 Մէկ օր ետքը — կիրակէ՛՛ք գացի տեսայ  
 պառկած էր անկողնին մէջ, դեղերու չի-  
 չեր իր գլխուն վերեւ դրուած էին . աչ-  
 քեր բացաւ, և տեսնելով զիս խնդայ :

ծած իր կեցաց ու ետքը միաբարտով ըսի :  
 Կէս ի-ճիտե՛ ալ՝ գաղտնի հիւանդոյսհին՝  
 որ քովերս կը գառնար՝ ձեռքը շնորհ, և  
 ապաշնչի որ աղէկ նայի Աստուծ սիրուն .  
 գաւկի . մօր, տան ու տղի տէր է ըօք , և  
 դարձայ մեր Իւր՝ ոտքս առաջ , սիրտս  
 ետեւ : Գիշերն երազիս մէջ Մանօ տեսայ,  
 ալ հիւանդութիւն չունէր . հազն անցած  
 էր , իրոյ էլ-ծ , և երեսին կարմրութիւնն  
 ալ առջի պէս էր : Իր փեսութեան լա-  
 թերն հազած էր .—Ո՛ր կ'երթար, Մանօ .  
 նա ձէն շտուաւ , և մատողը միայն եր-  
 կինք ցցուց : Վախով արթնցայ . ուրի՛ կողմ  
 տակաւին կարմրած չէր . երազս բարե-  
 գուշակ չերեւցաւ ինձ . ոչ մէկու բան մը  
 ըսի , և գացի մեր Իւն-նի : Տրտու՛մ նըս-  
 տած էի : Արեւն երեւցաւ . ըսին թէ  
 մարդ մը զքեզ կը փնտռէ : Հասկցայ , ալ  
 Մանօ չկար : Երկու հոգի ելանք գացինք :  
 Ա՛րս , Մանօ պատանքի մէջ էր . գերեզ-  
 ման տարինք : Օրհնեալ ըլլայ մեր զարիպ  
 տէրտէրը . խեղճուկ ձէնով հանգստեան  
 կարգն ամրողը կատարեց . ի վերջոյ գե-  
 րեզմանն ալ կնեցք . խաչով ու ըսաւ .  
 «Կնիքս անշարժ եղիցիս : Իրաւ , Մագոս ,  
 միտքս դրել էի որ եթէ Աստուծով աղէկ-  
 նայ , առջի գարուն հասած չհասած՝ Մա-  
 նօն հայրենիք զրկեմ . գոնէ՛ մեր գերեզ-  
 մանոցը կը տանէիք և հօրս քով կը հանգ-  
 չեցնէիք զնա , և ամէն շաբաթ գիշեր՝  
 խունկ կը ծխէիր իր գերեզմանին քով :  
 Բայց ի՛նչ ընենք . Աստուծոյ կամքն այս  
 է եղել : Դուք ողջ կեցիք , մայրս :»

Չեմ գիտեր թէ ի՛նչ կը գրեմ , Ար-  
 փիար : Յոգուածս խմբագրելէ երկու օր  
 առաջ՝ տկար էի . քրտնաթոր գլուխս ,  
 քանի մը տենդոտ վայրկեաններու մէջ ,  
 բարձիս վրայ հանգուցած մուցեր էի ա-  
 մեն բանը : Արթնցայ . ըսին թէ ջանիցս  
 մօրս անունն յանգզայս արտասանած եմ ,  
 մօրս՝ որուն գերեզմանին քով վէզ կը խա-  
 յայի երբ ի հող գրին զնա եւ մեր տէր-  
 տէրն վերջին աղօթքը կը մըմնջէր : Խեղ-  
 ճուկ Մանօ օրհասական տաղնապայքը  
 մէջ ջանիցս արդեօք արտասանած էր կրա-  
 կոտ շրթամբք Մագօի անունն , որ հօրը  
 մահուընէն ետքն իրենց տանն հայր ու  
 մայր է միանգամայն . գիրենք , երեք եղ-  
 բայր մեծցուց , տուն տեղ ըրաւ : Հարստե՛

զաւկի տէր ըրաւ . ո՛րչափ փափաքեցաւ որ  
 Մագօի գեղջուկ ձեռքը քսուէր վերջին ան-  
 դամ իր քրտնած անկախն ու սառուցեալ  
 շրթանցը վրայ նուաղեալ տաք շունչը ժող-  
 վէց , Թագէն ու Ակօն գլխուն վերեւ  
 գտնուէին եւ ինքը կոտակներ ընէր որբե-  
 բուն համար .

Եւ մահամերձն ալ չ'աղօթէ երկու բան ,  
 նախ կեանքն եւ ապա՝ լացող մ'եր վրան :

Միւս թուղթերն չխառնենք , սիրելիս  
 Արփիար : Միայն սո շափն ուլ ըսեմ որ  
 ճրագները շմարած տանց մէջ , շատ կա-  
 բօտագինն սրտերու մէջ՝ այսպէս ջերմա-  
 դոյն յոյսեր կը մարին ի սպառ . մին կը  
 թողու ճառագող որբեր ու մանկամարտ այ-  
 րի մը . միւսն գորովագութ մայր , ծերուկ  
 հայր եւ տնակ մը որուն համար էր ամէն  
 բան ընէ այլ թող մի՛ տար որ յառաջ եր-  
 թամ՝ մեկնինք . թող մեր յօգնած ճամ-  
 բորդներն հանդ չին հայրենի տնակին մէջ ,  
 թող հանգչի իմ կարօն եւ ըսէ՛ մօրկանը .

մէն ի՛նչ օր է որ Ի- ջաղցր ծոցքն ,  
 Գլուխս Ի- դօշին , աչքքս խուփ կամ բաց ,  
 Սուրբ ձեռքերդ վըրայ , երեստ է բարձինս...

Ղարիպն ալ տուն տեղ , լացող ու խըն-  
 դացող ունի եղեր . զարմանալի բան չէ՞  
 այս , Արփիար :

ՀՐԱՆԻ

6 Նոյեմբեր 1888  
 Իւսկիւտար

# ԱՐԻՍՏԱԿԷՍ ՍՐԲԱԶԱՆ

ԱՌԱՋՆՈՐԻ ՎՐԱՍԱՆՆԻ ԵՒ ԻՄԷՐԵՅԹԻ

Թիֆլիզի Առաջնորդ Տ. Արիստակէս Սրբազանի հրատարակածն որսան ինքերն ըլլալով ի Թիֆլիզ, այս առթիւ մեզ հաղորդուած են անոր Առաջնորդ Սրբազանի մասին հետեւեալ կենսագրական տեղեկութիւնները զորս գահունակութեամբ կը հրատարակենք.

Սրբազան Արիստակէս Սեդրակեանն այժմ 43 տարեկան է . նա ծնուել է 1845 թուականին Երեւանի նահանգի մարզում . լու գաւառի Քալֆալու գիւղում . Հազիւ տասը տարեկան եղած՝ նա մտել է Սուրբ Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը, ուր եւ ստացել է սկզբնական վանական ուսումն . 1863-ին ձեռնադրուել է ասարկաւագ Մոսկուայի Հայոց եկեղեցու համար . Մոսկուայում երկու տարու շափ մնալով և ծառայելով Եկեղեցուն, իր գլխաւոր նշուածաւրդ եղել է կատարելագործել իր ուսումը մասնաւոր . ուսուցիչների օգնութեամբ . Չը տանելով տեղիկան կլիման՝ վերադարձել է կրկին Էջմիածնէն և վարդապետ ձեռնադրուելով՝ առաջին պատարագից յետոյ՝ իր ինքնակրթութիւնը շարունակելու փափաքով՝ 1866-ին ուղևորուել է Պոլիս, ուր մի եկեղեցում քարոզչի պաշտօն ստանալով՝ շարունակել է իր ուսումը, գլխաւորապէս ուսանելով Փերանոսէնն .

1866-ի վերջերում Եդիազար արքեպիսկոպոսը Բեսարաբիայի թեմի կառավարիչ նշանակուելով՝ կանչուով է Սեդրակեանին իր թեմը եւ իր հետ տանում Մոսկուա և Պետերբուրգ : Մի շատ ծանրաբարոյ, բարեկիրթ եւ խոհեմ վարդապետ էր, բարոյութիւն տարբեր վարդապետներին :

Վեհալն Հազարեանք սովորութիւն ունէին ամեն նոր եկող առաջնորդներին պատուել թանկագին ընծաներով նյութազարդ իրբու հին եպիսկոպոս ընծաներից հրատարուող չէր, թէ եւ այդ ընծաները նրա համար տրուէին, որ եկեղեցու հաշիւների մէջ չը խառնուէր . Եպիսկոպոսին թէ իր սարկաւագին եւ ծառաներին տրուին շքեղ հագուստներ . Եւստիպիոսի փա-

րաջէք, Թանկագին մուշտակներ, ժամացոյցներ եւ այլն . Երբ կարգը հասաւ Արիստակէս վարդապետին՝ հարցրին՝ թէ ինչ կրկանեաւ, նա բոլորովին մերժեց նրանց առաջարկութիւնը եւ ոչ մի բան չըտտացաւ : Այդ անուովոր անընչասիրութիւնը մի դեռ եւս ջանել վարդապետի կողմից շատերի համակրանքը գրուեց :

1866 թ . նշանակուեցաւ Արցախու թեմին առաջնորդի փոխանորդ, բայց այդ տեղից՝ հինգ ամից յետոյ՝ Տաթեւու վեհապետի յարգութիւնը տուին, ուր եւ մընաց միջնել 1868-ի ամառը, 1869 թուին իր ինքնիքի համաձայն Երնջակու ու Կարապետի վանքի վանահայրու թիւնն ստացաւ եւ այդ պաշտօնի մէջ մնաց մինչեւ 1874 թ . երբ կանչուեցաւ Էջմիածին եւ նշանակուելով նոր բացուելիք ձեմարանի թատցիչ ուղարկուեցաւ Կովկասի թեմերը ընտիր աշակերտներ ժողովելու համար .

75—76 դարձրցական տարում Հայկաբանութեան ուսուցիչ էր Ներսիսեան դպրոցում, իսկ տարուայ վերջին նշանակուեցաւ կառավարիչ Արցախու թեմի, ուր եւ մնաց մինչեւ 1880 թ . , Այնուհետեւ երկու տարի ուսուցչութիւն արաւ ձեմարանում եւ 1882 թուականին մայիսի 9-ին Գէորդ Կաթողիկոսը ձեռնադրեց եպիսկոպոս եւ նշանակեց առաջնորդ Վրաստանի եւ Իմերէթի Հայոց թեմի, ուր մուտք գործեց 1883-ի փետրվարի 20-ին . իսկ ներկայ թուականի հոկտեմբերի 16-ին առաւ իր հրատարականը Վեհափառ Կաթողիկոսին և խնդրեց, որ իրան ուղարկէ Խրիմու Ս . Ոռչ վանքը .

Մեծեցոյց տուինք միայն թուականներ, թէ երբ որտեղ է եղել մեր Սրբազանը . այդ ի հայրիկ ոչինչ նշանակութիւն չունի . գլխաւորը նրա կատարած գործերն են, նրա թողած յիշատակներն այն տեղերում, ուր որ եղել է : Կատարած գործը եղել է Բարեկարգութեան Ուր որ եղել է մեք է զարկել բարեկարգութեան եւ իր այդ գործը շարունակել է մինչեւ վերջին րոպէն, երբ ներքին կամ արտաքին հանգամանքներ կտրել է նրա առաջը, եւ ինչը՝ պէտք ունինք մենք, եթէ ոչ միայն եւ միայն բարեկարգութեան : Մեզ պէտք են բարեկարգութիւն ուսումնաւորութեան և խնդրեց, որ իրան ուղարկէ Կաթողիկոսին և խնդրեց, որ իրան ուղարկէ Կաթողիկոսին .

բարեկարգութիւն հոգեւորական դասու, բարեկարգութիւն վանքերի, եկամտաների, կալուածների: Իր այս յատուութեամբքն է, որ մեր Սրբազանն իր դէմ է յարուցանում անկարգութեան հերոսներին, անձնական շահուց ետեւից ընկածներին, որոնց համար աւելի լաւ է, որ հազար եկեղեցի քանդուի, քան թէ իրանց խնամի սանահէր մէկը այդ բարեկարգութիւնից նեւթական վնաս կրէ: Պէտք է միտ բերել միայն, թէ ինչ գրութեան մէջ էր Քիֆիլիթի թեմը նրա նախորդների օրով և ո՛րպի ի փշերով էր լցուած, ժողովրդի բարոյական անդաստանը, որ կարողանայ մարդ ներկայացնել իրան. թէ որպիսի ջանք և աշխատանք պէտք էր այդ փշերը սրբել մաքրելու համար, թէ որպիսի զօրեղ մարդկանց անձնական շահեր պիտի շօշափուէին դրանով:

Այս ամենը կը պարզուի, կ'որոշուի անուկով եւ տեղով ըստ ժամանակին, իսկ հիմա մեզ կը մնայ մաղթել միայն, որ Աստուած երկարացնի մեր Սրբազանի կեանքը իրան սիրող եւ յարգող ժողովրդի համար, այն ժողովրդի, որ ինքն իր աչքով տեսած նրա անխոնջ աշխատանքը յօգուտ եւ ի պայծառութիւն եկեղեցեաց եւ ուսումնարանաց թեմին, տեսաւ նրա օրով կառուցած հոյակապ ուսումնարանները, տեսաւ նրա այցելութիւնն այնպիսի տեղերում, ուր իր նախորդներից ոչ մէկի ոտքը կոխած չէր. տեսաւ մի առաջնորդ, որի այցելութիւնն իր հօտին ոչ թէ խուզելու նպատակաւ էր, այլ խնամակաւ, ըստ որում ոչ միայն ոչ մի տեղից մեղահամոյր չէր վերցնում, այլ ինքն էր իրանից նուէրներ անում թէ ազգատ եկեղեցիներին եւ թէ դպրոցներին. եկեղեցիք էր օժտւում եւ իր ստացած արդար վաւճաբ ամբողջութեամբ յետ էր դարձնում նոյն եկեղեցիներին, տեսաւ այդ ամենը եւ գարանալով բացառանջեց թէ անա մի առաջնորդ, որ արդարեւ աբէն է, առաջնորդ է, ժրպան է եւ որ ամենից մեծն է բարեկարգութեան մի առաջիկ է: Արդարեւ երբեւիցէ մի տիտղոս պիտի սրուի, այդ տիտղոսը պէտք է լինի ԲՅԱՐԵՎԱՐԳՈՂ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ ՍԵՆՐԱԿԱՅԱՆ: Ոչ ոք իր ժամանակներեց կարող չէ խել նրանից այս բազմակի յո-

նորհքը, որ ի Տեառնէ դրոշմուած է նրա կրծքի վրայ, նրա պարզ եւ անրիժ ձակաւի վրայ:

Մեր վարդապետներից շատերն անտոհմիկ լինելով՝ նշանաւոր տոհմանուններ են սեփականում իրանց, ինչպէս Թուրինեան, Լուսինեան, Արշարունի, Շիրակունի, Բաբարտունի, Վեհապետեան, Հասան-Ջալալեան, և այլն: Մեր Սրբազանը սրանց հակառակ փոխանակ գրելու Մեւլիթ Առաքէլեան, որ իր ազգանունն է, դրում է սուկ Աեդրակեան՝ իր հօր անունով: Սեդրակեան էր Ստեփաննոսեան Մէլիթ-Առաքէլեան. ն.յս այն Մէլիթ-Առաքէլեաններն են, որոնք Մովկուս Ափեկան ասելով՝ զաղթեցին Արշարունիք: Սըրբազանի մայրն է Թագուհի Մէլիթ-Բալասանեան: Ղարաբաղի Աւետարանոց գիւղից: Մէլիթ-Բալասանեանները դեռ Պարսից իշխանութեան ժամանակ Ղարաբաղից գաղթել են Արշարունիք և բնակուել Հայաստան գիւղում: Սրբազանի հայրը՝ Սեդրակը մի քաջ տղամարդ էր և շատ յարգուած: Սրբազանն ինքը զուրկ չէ իր հօր քաջութիւնից: Անկարծ չէ ոչ մի և ոչ զէնք բանեցնելում և գիտէ տեղն ընկած ժամանակ իրան պաշտպանել: Սակայն մեր Սրբազանի թէ քաջութիւնն և անվեհերութիւնը և թէ իր մեղամաղձիկ քնքուշ սիրտը ծածկուած են ծանրաբարոյ և տխուր կերպարանքի հաստ կեղեւի տակ: Չունի էջմիածնեցոց յատուկ ուրախ ու զուարթ ընաւորութիւնը՝ չը գիտէ զուարճանալ նրանց հետ, մասնակցել նշրանաց անեղ կամ մեղուոր դատարկութիւններին, համբարչյս չէ նրանց արարքներին և գործելու եզանակին, չունի ոչ մի մտերիմ ընկեր նրանցից, և այդ պատճառով էլ իր ընկերներից էօր ծածօտ մականուն է ստացել: Փոքր ժանգոտ են ասում մշ ծածօտից որոշելու համար, որ աւելի մեծի տիտղոս է:

Էջմիածնի միաբանները միմեանց վերարբերութեամբ այնպէս են, ինչպէս լի նում են մի հօրից ծնուած հարազատ եղբայրները: Իրանք իրանց համարում են հօգոտը իր-սաննի տեւ ծածօտից: Իսկ իրանց ժառանգութիւնն է էջմիածինը իր բոլոր անեցածնց, բոլոր Հաւ ժողովուրդը:

բոլոր վիճակներով: Վայ է, եթէ եղբայրներինց մկկին հայրն աւելի սիրեց, մեծարեց, ծաղկեայ պատմուճան հագցրեց, վայ է, եթէ մէկը իր մտաւոր և բարոյական զարգացմամբ բորձրացաւ միւսներինց: Բայց աւելի վայ նրան, ով որ իրանց ժառանգութիւնից աւելի փայլուն բաժին ստացաւ, այնուհետեւ էլ թայրակած Լաւրենց ցոյց է տալիս իր բուն կերպարանքը, կրկնվում է Յովսէփի վաճառումը, Աբէյի սպանութիւնը, Շիլլերի Կարլի աւաղակ դառնալը, Այսպէս է եղել Վազար Փարպեցու օրից մինչեւ մեր օրերը: Եւ ի՞նչպէս կարելի է, որ ուրիշ կերպ լինի:

Այրազան Սեղբակեանը երգեմն այս և այն վանքը քաջուելով աւելի ժամանակ է ունեցել գրաւոր աշխատութեան պարագել: Այդ մենակեցութեան արդիւնքն է նրա Դրէպերի թարգմանութիւնը, որ մի ծանր վատակ է: Ուսումնասիր վարդապետը ոչ այնքան գործի օգտակարութեանն է նայել այդ գիրքը թարգմանելիս, որքան իր մտաւոր ճգնութեանը: Այսպիսի մի ծանր աշխատութիւն է և էր-նեսա Նաւիլի— Ժէնէվայի Համալսարանի փիլիսոփայութեան պրօֆէսորի — «Յաւտեսական կեանքի» թարգմանութիւնը, թարգմանել է եւ Հակոբաբուզէի ճանապարհորդութիւնը, ժողովել է եւ Մըշեցոց ու Վանեցոց երգերը «Բնար» անունով: Իւր ինքնուրոյն գրուածքն է «Ջընութիւնը Երնջակայ գաւառին»: Գրած ունի եւ իւր թեմում արած ճանապարհորդութիւնը: Հայր Ալիշանի թղթակիցն լինելով բաւական տեղեկութիւններ է հաղորդել նրան, որոնք ժամանակին լոյս կը տեսնեն նշանաւոր Հայրենագիրտի երկերի մէջ: Հիմա էլ, եթէ ինչպէս ինքը խնդրել է, Նորին Վեհափառութիւնը հարեհանի ուղարկել Նրիվու Ս. Սաշ վանքը, այնտեղ իր ժամանակը զուր չի անցկացընիլ, այլ կարգի կը բերէ իր կիսատ թողած գրաւոր վատակները, որոնց ձեւքը տալ կարող չէ առաջնորդութեան ծանր և բազմակող պաշտօնում: Մեր արագանը ոչ միայն հմուտ հայկաբան է, ոչ միայն գիտէ ուսերէն ու Ֆրանսերէն, այլ եւ հմուտ է նաեւ մեր լայնաւոր բարբառներն եւ ազատ ու մաքուր դրամբ թէ արեւմտեան եւ թէ արեւելեան գրաւոր լեզուներով: «Յաւտեսական կեանքը» և թարգմանել է Տաճկաստանի գրաւոր լեզուով:

ՏՊԻՍԵՅԻ

# ԱՅՐԻՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա

Գիշեր էր, նոյեմբերի տրոսում ու խնաւ գիշեր, որը մթութեանը մէջ ընկող մած էր Բերայի Մեծ ձամբան իր քարաբաշէն ու բազմապարկ սպանունքներով Փոշիի պէս բարակ ու սաեղի պէս տուանծրեւ մը կուգար ու կը լուար ամայ ու թափուր քարայտակն: Ոստիկանութեան Պահականոցին գէմ, երկու կառպան յապաղած անցորդ մը գտնելէ յուսաբեկ՝ ցուրտէն պատսպարուելու համար իրենց կառքին մէջ կը մրափէին: Մարդ չկար ու այդ աղմկալից փողոցի ծխորուրէրէն բան չէր մնացեր բայց եթէ առջի իրիկուրէն ի վեր տեղացող անձրեւին անընդհատ ձայնն իր յուսահատակա միօրինակութեամբ. եւ հեռուէ հեռու ուղիղ ու լայն փողոցին բոլոր երկայնութեամբ, մութին մէջ կը տեսնուէր շարմը կարմիր ու արեւնագոյն կէտերու որ կազերուն տամուկ ու դողդոջուն լոյսերըն էին:

Գլխօնեբը, Կֆէ-լա՛ թանեբը եւ ուրիշ քրօսավայրք շատոնց գոցուած էին. փոխարէն, հո՞՞ մասվաճառի, հո՞՞ կաթնաճաճառի խանութ մը իր դուռը կը բանար, եւ մութուն ելլելու վարժուող այս խանութպաններու աչկերտները՝ դեհնոր արթնցած, կէս ջուռն, կէս արթունք կանթեղի լուսով գիշերէն կ'սկսէին իրենն օրական աշխատութիւնը:

Ձայն ձուռն չի կար դեռ ու գիշերապահը տասներկու կը զարնէր փողոցի հնչուն մայթին վրայ: Պատի մը տակ մարդ մը՝ անշուշտ խալտան մը մէջ ունեցած էր՝ ունեցածը կորսնցնելէ ետք կեկտած էր լուսնալուս սպասուելով, պատկելու տեղ մը գտնելէ յուսահատուր, վստիքի այս չիւրեկալ փողոցն ստակ չ'ունեցողներուն համար չէ: Ասդին անդիքուրներ հուաքող մարդիկ, լապտեր մ'ձեռքերնին, լեկ ու զլխահակ, իրենց սի կողովը կը լեցնէին:



Թիւնը կը կորսնցնէր. Կալաթա-Սէրայէն վար վաճառատանց մէջ ձայներ կը լուռէին ու քիչ քիչ անցորդներ երեւան կ'ելլէին փողոցին մէջ, Բանջարեղէներով ու կաթի բանակներով բեռնա սրնայ ձիեր հանդարտաբայ կուգային կ'անցնէին, վզերնուն կախուած զանգակներուն ձայնովն արթնցնելով այդ քարուկիր շէնքերուն արձագանգը:

Հիմա ա՛լ լուսնալու մօտ էր ու Բերայի տուները կը ճշդուէին ստուերամած հորիզոնին վրայ . ձայները երթալով կը շտտնային . խանութներու երկաթէ փեղկերը կը շարժէին . կանուխ ելլող սպասաւորներ, պահապաններ, փեղկին մէջ բացուած դռակէն դուրս կ'ելլէին ու վաճառատանց առջեւի սալաքարերը կը մաքրէին խանութին ներսը աւելել յետոյ . բոկեզ, կաթ ու սուշ վաճառորդներ պոռալով կը սիսին իրենց առուտեան առուտուրն, այդ ծառայներուն, բեռնակիրներուն ու պահապաններուն բերելով աժան գինով նախանաչ մը . բարի լոյսեր կը փոխանակուէին դրացի մարդոց մէջ:

Բ

Մու.թուն հետ ելաւ Մարտիրոս . խանութն աւելց, առջի օրուքնէ անկարգ թողուած սուփերն ու ծրարները տեղը դրաւ, վաճառատան մեծ ապակին սրբեց ու երկաթեայ փեղկերը բացաւ: Քիչ մը վերջն ա՛լ ըրորովին լուսցած էր. գործաւորներ, արհեստաւորներ ամէն ազգէ ու ամէն կարգէ Պոլիս կը դիմէին ու Մեծ փողոցը կը զարթնուր, կ'ոգեւորուէր այս անցուդարձովը . կամաց կամաց խանութները կը բացուէին, ապակիները կը մաքրուէին . զրագիրներ իրենց պատօնին, կար կարող աղջիկներ իրենց գործին գլուխը կուգային:

Առասօտ էր:

Վեց ամէն ի վեր էր որ հոս կ'աշխատէր իր հօրեղբոր տեղ որ տասն տարի իրրու բեռնակիր ու պահպան ծառայելէ յետոյ հայրենիք կը վերագաւանար Մարտիրոսը թողով իր տեղը:

Պ) տարու կար չ'կար. բարձրահասակ ու մոն մոնջ էր ինչպէս կ'ըսեն կանայք, բայց իր թուխ ու գեղեցիկ գէմըը պատանութեան փափկութիւնով զարդարուէր:

առնական դրոշմն առնելով հանգերձ . սեւահեր ու սեւաշուրի էր . քաղցր, վեհերոտ և աղայական բան մ'ունէր իր նայուածքը . լայն ու դուրս ցցուած կուրծքն իր հզօր ու հպարտ իրանին ըրոր առաւելութիւնները ցոյց կուտար: Կապոյտ չուխայէ ձեռք մը հագուստ շինել տուեր էին իրեն որ ազէկ կը վայլէր իր կրողի ու առոյգ մարմնոյն . Չլապինգ բազուկներն հազուապիտ ոյժ մը պարտէին ունենալ, մինչդեռ կարճ ու ամփոփ փոխանին զանգապանն աղբերց հարուստ ու բարձեւ. լեցուցութիւնը կը հաստատէր:

Բերայի մէջ նորութիւն մ'եղաւ այս նորեկ պահպանը . կանայք հիացան ու սքանչացան այս երիտասարդին վրայ, որուն պարկեշտ համեստութիւնը նոր ու կանխելի համար միայն հասկնալի հրապոյր մը կուտար:

Վաճառատան համար ձգողութեան պատճառ մը եղաւ այս պատանի մարդը . ինքը միայն չհասկցաւ այն հետաքրքիր ու մանրախոյզ նայուածքներն որոց ենթակայ էր . ամէնքն համակրելի կը գտնէին զինքն ու չէին քաշուեր բացէ ի բաց իր երեսին ըսելու այնպիսի անհաւատալի համարձակութեամբ որուն վրայ կը զարմանար . ասմունանացած ետս կը հարցնէին իրեն ամէն կողմէ ու հաստատական պատասխանին վրայ, որը կը ցաւէր, որը կը ծիծաղէր . այս պոլսեցի կիները կատակը կը սիրէին . այնպիսի յիտար բանի կը տեսներ որոնց վրայ հազիւ իր խնդուքը կը զսպէր:

Առանց բացորոշ բան մը գիտնալու, իր ներամիտ դրսեցիի ընազուգումովը կ'ըմբռնէր սակայն որ իր նպատակ որ ընդունելութիւնն առելի վայելուչ մարմնոյն կը պարտէր քան թէ իր աշխատութեանը: Բռնիման վաճառատան մէջ առջի օրերը Մարտիրոսի համար ապշութեան, զարմանաց ու սքանչացման օրեր եղան:

Այս բազմապարկ ու փառաւոր չէնքն իր հազարումէկ բաժանումներով, օժապոտայ տանդուխներով, ճոխութեամբ, յաճախորդաց անընդհատ հոտանքով, պղծտիկ բայց երանելի քաղաքի մը աղբեցութիւնն ունեցաւ իր վրայ:

մէ՛ծիրտէ՛ններու հնչիւնն էր որ կուգար զբան մօտ գրուած սեղանին կողմէն, ուր յատուկ պաշտօնեայ մը անհաւատալի գումարներ ժողովելու միայն զբաղած էր:

Յաճախորդներ, մեծ մասամբ կանայք, համարձակ, երեսին բաց, ծովն ազգէ, գլխաւորապէս ֆոնէնկներս, մինչեւ անգամ Թրքուհիներ ու շայուհիներ, շարքաւ, ներկուած, միշտ գեղեցիկ ու ալ աւելի գեղեցիկ լինելու հետամուտ՝ կուգային իրենց անվերջանալի գոյններու, կերպասներու, տարազներու մանրամասնութեամբ ու մէ՛ծերով զբաղեցնելու բոլոր խանութքը:

Ինքն՝ հոն կանգուե՛ն էր, շուարած, բան մը չհասկնալով այս տարօրինակ ու միջազգային լեզուէն զոր կը խօսէին եւ այս առածախնէն որուն օգտակարութիւնը չ'էր ըմբռներ. յետոյ ինքն ալ վարժուեալով քիչ քիչ այս բուրգէ, մետաքսէ, ասուէ, շղարչէ, թաւչէ ծրարներուն մէջ զորս, մէկ օրէն միւսն, այս կանանց շրջակաքեստը զարձած կը տեսներ. տաւու առ տակու հտակնալով այս ամէնը. Ֆուրանքէն բաւեր շարունակ լսելով ու սորվելով: Պարապ չ'էին թողոր գինքը խանութին մէջ, աննդհատ տարուբեր այս բոլոր նիւթերուն զորս մէկ տեղէն միւսը կը փոխադրէր մինչեւ իրիկուն:

Եւ գիշերն երբ այս բոլոր ժխորը դադրէր ու մինակ մնար ընդարձակ խանութին մէջ, վարանտ ու հետաքրքիր, կը խառնէր, հասկնալու կը ջանար այս բոլոր նիւթերը:

Հոս ֆիլփիտէ կամ մետաքսէ կանացի գուլպայներ գոյնգոյն, բանուած, մինչեւ գիտն ամփոփելու չափ երկայն, որոնց ներդաշնակ շրջագիծը՝ մարմնոյն ճշդութեամբ պատկանելու համար ձևուած էր: Անդին՝ ճերմակեղէններ՝ սպիտակ ու նուրբ փուլէ՛ որոց իր համբակ մտնով գործածութեան տեղ չ'էր գտներ: Շապիկներ՝ երկար, լայն, թափանցիկ, փրփուր բռնիւններով խառն, որք կուրծքը մերկ թողլու քան թէ ծածկելու համար պատրաստուած էին. եւ ուրիշ ճերմակեղէն հանգերմներ, կարուած թէ կարուելիք, չ'էր գիտեր, վասնզի էն անհրաժեշտ մասերն իրարմէ անջատ ու բաց թողուած կը տեսնուէին. անդիս գլխարկներ՝ օճուակներ

րով կամ ծաղիկներով զարդարուն, կօշիկներ տարօրինակ ձեւերով, ձեռնոցներ, պախճաւանդներ, ծնրակապէք—այս վերջինները կը ճանչնար հայրենիքէն, եւ զորս երբեմն իր ծնկան վրայ կը փորձէր, — վերջապէս հազար խոռովիչ ու հեշտուէտ նիւթեր, նա մանաւանդ գեղաբոյր փոքրիկ ու զարդարուն շիշեր որք իր եզրսեցիտ դիւրագրգիռ քթին համար ամէնէն ակործելի էին:

Բայց վերի յարկն ա՛լ աւելի զարմանքներու կը հանդպէր. կար կարողներու սենեակին մէջ, մերկ, բոլորովին մերկ կին մը, ո՛չ, կանացի փայտաշէն մարմին մը, ճշմարիտ ու կենդանի կարծուելու չափ ճարտարութեամբ շինուած, իր զմայլած աչքին կը պարզէր, յայտնի իրութեամբ մը, այն բոլոր թաքուն հրապոյրներն որք իր նոր ամուսնացած երիտասարդի տեսնալը արիւնը կը բորբոքէին: Ու մինչեւ լըյս չ'էր քնանար, կանանց մարմնոյն համար մտածուած, ստեղծուած, երեւակայուած այս բոլոր խօսուե՛ն ու գրգռիչ նիւթերէն շրջապատեալ, որոց բոլորին վրայ, իրեւ հրաշալի աշխարհի մը մէջ, այդ մերկ կինը՝ սեգ, խորտա, բայց միանգամայն կարծես թէ անձնատուր լինելու—պատրաստ, կը տիրէր իր մարմնոյն շրջագոցին գեղովը. ու կանանց յատուկ, անոնց գաղտնիքներովը, հրապոյրներովը լեցուն այս քաղաքին մէջ անդայ պահպան մնալու դատապարտուած, այս երիտասարդը կուրտ աքաղաղի տարօրինակ դեր մը կ'ստանար:

9

Հայրենիքը, Ձարդար, իր մանկամարդ կիւնը, կ'սպասէր: Իրենց բուրբ պսակէն ի վեր հազիւ մէկ երկու ամիս էրկանը երեսը տեսած էր, ու ստակ վատակելու աննահանգելի հարկը՝ հեռուոր երկիրներ առաջնորդած էր զնա:

Կը տիրէր արդեօք այն երիտասարդն որ իր ամուսինն եղած էր. այն կոյր ու անտրտունը հնազանդութեան մէջ որ Հայուհեաց բոլոր կեանքը կը կազմէ այդ կողմերն, ո՛չ խորհելու և ո՛չ զգալու տեղի մնացած է. իրեն չ'էին հարցուցներ երբեք թէ կ'ուզէր այն մարդը զոր իրեն սակմանած էր: Ինքն ալ չ'էր մտածեր անոր

վրայ . ո՛չ կ'ատէր և ոչ կը սիրէր զնա մինչեւ իրենց ամուսնութեան օրն , և ամուսնութենէն յետոյ . ս'յնչափ քի՛չ ատեն անցուցած էր հետն , այնչափ ատեր-մութենէն զուրկ , որ զբթիթէ քաջտօնական եղած էին իրենց յարաբերութիւնքը՝ միեւնոյն յարկին տակ յնակող բազմաթիւ ազգականներու աններող նայուածքին տակ :

Այդ նոր ընտանեաց մէջ , ուր կը մշտնէր գլխաւորապէս ծառայութեան համար , ամէնէն քիչ իր էրկանը կը պատկանէր : վասնզի կետրոջ , աներկն , միւս ազգականներուն սպասաւորութիւնն էր իր աւագ պարտաւորութիւնը :

Այս զեղի ազլիկը գորովայ և սիրոյ անսպառ գանձեր ունէր սակայն իր սրտին խորն , որք մէկ բառով , մէկ գգուանքով թերեւս պիտի յայտնուէին : Բայց տւանդութիւնը կար իր աչքին առջեւ , իր ամուսնոյն հօրեղբարց կիները կային , նոյն իսկ իր կեսուրը կար գէմը , Պոլիս գացող մնացող ամուսիններու սպասելով , տան անհատում հոգեբուն ու աշխատութեանցը մէջ մաշելով ծերացած կիներ , հիմա գրեթէ պառականեր , ճիշդ իրեն պէս , նոր հարսի պէս լռիկ ու խոնարհ այդ մարդոց քով որք յանկարծ , երկարատեւ տարիներէ յետոյ , յիշեր էին թէ այդ դժբաղդներուն ամուսիններն էին իրենք ու հայրենիք վերադարձեր էին , այլեւս աննպատակ ու անօգուտ դարձած ամուսնական կեանքը շարունակելու :

Ահա այդ հէգ , ազերեկ ու կորագրամակ օրինակները կային իր առջեւ որք ստուերներու պէս անխօս՝ իր շուրջը կը դառնային , և Չարգար շէրիկ կնկանս ուրիշ տեսակը չէր երեւակայած երեքը :

Ձի գործացաւ ուրեմն երբ կարգէ էրկանը եկաւ մեկնելու : Իր մշնջնեապէս կրաւորական դերին մէջ գաւառացի հայ կինը քանգատելու զօրութիւնն անգամ չուէր . Պոլիսէն թուղթ եկաւ . հօրեղբոր մը գալուստն իմացուցին ու Մարտիրոսի մեկնելու պատրաստութիւնները տեսան . հարսի՛ իր հոգածու ամուսնոյ պարտաւորութեամբ՝ երկու զոյգ բուրբէ զուլպայ շինեց , մայրն ու միւս ազգականները մէյ մէկ յիշատակ տուին ճամբորդացիս

կուշարթի օրուան կարաւանով մօտի գիւղէն Պոլիս գացող ուրիշ երիտասարդի մը Յաջօյին հետ ճամբայ դրին զայն : Չարգար մինչեւ իրենց արտն , որ ճամբուն կողմն էր , մէկտեղ գնաց ու՝ փերջի պահուն երբ հրածելոյի ողջոյնները փոխանակուեցան , արցունքի փախտական կաթիլ մը սահեցաւ ինկաւ . հարսին աչքէն երիտասարդին ձեռքին վրայ . այսչափ ահա այս բաժանման բոլոր սրտայուզութիւնը :

Մարտիրոսի մեկնելէն ի վեր անոր հարսն իր բաժինն առած էր տան աշխատութենէն ու իր տեղը կեսուրն հանգըտեան կոչուած . հաց եփել , կաթը կթել , շուր ու փայտ բերել իրեն կ'իյնար միւտ , ու երիտասարդ կինն՝ ագարակի կենդանեաց յատուկ հեզութեամբ մը իր ծառայութիւնը կը կատարէր :

Դ

Բերայի մեծ փողոցին մէջ վաճառքի ահագին հակի մը անտանելի բեռան տակ ճնշուած , քրտնաթոր , ձակատներուն երակները պայթելու չափ ուռած , հագուստներն պատառուն , ցեխտտ , չլրս բեռանակիրներ , մին ծերուկ , այս տառապանաց տակ այեւորած , միւս երեքը դու երիտասարդ , կ'անցնէին հեւալով :

—Յաջօ՛ , պօռաց ձայն մը տնոնցմէ միոյն :

Յայտ զուրիշ դարձուցօ , մեծահարուստ վաճառատունէ մը իր անձանթ առունը տուող ձայնին տէրը ճանչնալու համար :

Նոր լաթերով դեղապանծ երիտասարդ մը , իր կապոյտ լօգիկին մէջէն ցոյց տալով վահանածեւ կուրծքն , ածիլուած , մաքուր , ֆէնս ալ կողմ ծուած , ու իր փոխանին փոթերը շտկելով , վաճառատան դրան մօտ կեցեր ու իրեն կը ձայնէր :

Բեռնակիրներն արդէն ուժասպառ վար դրին իրենց բեռը . բայց թաղապետութեան շտապներն ընդգիմացան . Բերայի մեծ ճամբան յոգնութիւն առնելու տեղ չ'էր . թեռնակիրները շուշ առնուլ կ'ուզէին եւ շալվաշները թոյլ չ'էին տար :

—Օ՛ւշ , կ'ըսէր սպիտակ ծապաւչններով զարդարուած ու մէջքը սուր կապած կէս-լեզու յոյն պաշտօնեայ մը որ անոնց մեծ

Բեռնակիրներն իրենց հայախառն թուրքերէնովը կը բողբէին .

—Պիզիմոէ՛ ճանիմիզ եօ՛ր մի, պէ՛ մարզ Աստուծոյ, կը քօչէր ծէրուկն այս մարդուն դառնալով :

Գլխարկաւոր անցորդներ կը շրջապատէին գիրենք, կանայք Գնէ՞զ կ'առնէին զէ՛նին պատճառն իմանալու հետաքրքիր : Բեռնակիրները նորէն կը ծռէին իրենց տաժանելի խաչին տակ մտնելու համար : Աղքատութիւնն՝ հարստութեան քէմ կանգ առնելու իրաւունք չ'ունէր :

Մարտիրոս իր շորս ներշնչներուն հեռանալը տեսաւ . ո՛ր Խաչօն, յուր ինքե սակայն միեւնոյն գեղէն էին գրեթէ, միեւնոյն պարիքն ունէին և միասին մեկներ էին երկրէն . Խաչօն ալ կայտատա ու յաղթամարմին տղայ մ'էր իր նշանածը թողած, ինչպէս որ ինքն ալ իր կինը ձգած էր՝ ստա՛կ, միշտ ստա՛կ, յաւիտեան գոտակ վաստակելու համար :

Ինք Բերայ էր ու Խաչօն Ղալաթիա միացել էր . մին լեռան վրայ, միւսն ըստորոտը, և կը գլուխէր կէ՛ն երբեք այդ ատորառէն վեր չ'ալիսի կարենար ելնել : Մարտիրոս այս բողբողութիւնը կ'ընէր մտքէն :

Ազէ՛կ շահ կար իր ծառայութեան մէջ ու աղէ՛կ հանոյք . հայրենի տան աղքատիկ ու միօրինակ կեանքը՝ լուսուն ճեղքուելուն հետ անհետացող անհանդ և անկարելի երազի մը տպաւորութիւնը կը դառնար հետզհետէ . այս բուրրովին իր զական աշխարհին սեմէն ուր հազիւ ոտք կը կոխէր, ապագան փայլուն ու հիանալի կ'երեւէր . Փռանսերէն սորվիլ կ'սկսէր ա՛հա ու մօտ կ'ըսէր տիկիններուն խօսած ատենը . վասնզի տիկնանց հետ կը խօսէր . շարունակ փոքր ու մեծ ծրարներ կը օտնէր անոնց տունն ու դուռնէն կ'առնէր :

Յայտնի էր որ թիչ շատ ամէնուն հաճելի սպասաւոր մ'էր . Յռանսուհի մը արեւելքացոց այս կատարելագործեալ տիպարին սիրահար, ու նամանաւոր Բերայի հոյ տիկին մը ամսնէն անսկիւպ կերպով իր փոքրիկ ծառայութիւնները կը վարձատրէին ու ինքն այս ներհակ, նախանձոտ ու սոթիս հրապոյրներու մէջ կը վարանէր իր գեռաբոյս պեխերը շոյելով :

Ե

Հայ տիկինն հարուստ վաճառականի մը ամուսինն էր . շարունակ յօգապաւնէ տանջուող էրիկէն զգուած, մոռցեր էր որ այս ծեր բայց հարուստ մարդը՝ մանկութենէն ի վեր զինքն հալածող աղքատութենէն դուրս հաներ ու իրեն կին ըրած էր զինք :

Այդ հարստութիւնը՝ զոր միշտ աղքատութեան խօշորացոյցով տեսած էր՝ ըրնաւ չ'էր փոխարիներ հիւանդոտ ու ալեւոր մարդու մը կին լինելու դժբաղդութիւնն եւ այս առուտութեն՝ որ իր ամուսնութիւնն էր՝ պարագայներուն ներածին շափ զղումն յայտնած էր :

Ամուսինն յիսունը անցուկ և այն տըկար ու ապուշ մարդերէն էր որք կարծես յատկապէս հարուստ ըլլալու ու մընայու համար աշխարհ կուգան . զաւակ չ'էր կրցած ունենալ, եւ իր գեղանի կընոջ՝ որուն ապիտակ ու վարդերանգ մարմինն իր ծեր վաւաշտտի վերջին մխիթարութիւնն էր, յօծարակամ թոյլ կուտար իր վրայ իշխելու . կինն, անկախ ինքնիշխան, իր անահճման ազատութիւնն ինչ բանի գործածելուն վրայ շուարած, ամէն օր Բերայի խանութներուն մէջ թափառիկ, մեծածախս արդուզարդի մտմտոււթեամբ զբաղած, ոչ ոք գտած էր մինչև ցայն վայր իր արտակարգ բնաւորութեան յարմար Շուրջը դարձող երիտասարդներ միշտ մեծարանքով ու փոյփայանքով փայելի էին զինքն, եւ սակայն այս թոյլ ու վատ եղանակը չ'էր իր տարփատենջ երազն :

Յանկարծ օր մը իր յաճախած խանութներէն միոյն մէջ երիտասարդ մը տեսաւ առոյգ, գեղեցիկ ու կոպիտ, որ ճիշդ իր փնտած առնական տիպարն էր, եւ այն վայրիեանէն այս եղաւ իր միակ կիրքն : Ալ չի պակսեցաւ այդ վաճառատունէն մանր մունր բաներ գնելու պատուակաւ . անթիւ, անհամար ծրարներ կը զրկէր տուն զորս Մարտիրոս յօծարափոյթ կը տանէր, ու երբ պատահէր որ իր մեծածախս շրջագոյններն երիտասարդին դպէր, կամ դրամ տալու առթիւ իր քընթոյշ ու փոխուկ ձեռքն անոր՝ լայն, ամբարձր, արտաքին անքին հանդպէր, սար-

սուռ մը կ'անցնէր իր ցանկատենչ մորթին փրայլն :

Երբեմն տունը կը գտնուէր ու մոռցուած յանձնարարութիւն մը լսելու համար Մարտիրոս մինչեւ հանըմին երանաւէտ սենեակը կ'ելլէր :

Այսպէս շարունակեց տիկինն տանն մը , բայց յետոյ համբերութիւնն հատաւ . վերջապէս այդ գեղեցիկ հմաւը սեպելու մարդ չ'էր : Բայց միշտ հնարամիտ ճարտարութեամբ իր տեսակցութիւնները կարգադրեց այս դրսեցի տղուն հետ սրուն անփորձ պարզմտութիւնն իր տարփանաց սաստկութեանը չափ մեծ էր : կը զգար որ յիմարութիւններ ընելու կարող էր անոր համար . ու թաղուած գանձ մը գտնող ագահն մը պէս իրեն միայն վերապահել ու յատկացնել կ'ուզէր զայն , մինչդեռ Մարտիրոս՝ ճշմարիտ լեռնցի որ իր արեւելքցի մարդու բնութիւնը թողուտ ատեն ունեցած չ'էր , այս հարուստ ու վաշխապէղ կնոջ՝ իր ազգաց կրօն վրայ կը դարմանար կը մտար :

Եւ այս հեշտութեանց մէջ մտըրուած , հայրենի տնակին մէջ թողած օրինաւոր ամուսինը չէր յիշեր անգամ . այն արցունքով գրուած տողերը զոր թշուառու հին իր ձեռքը կը հասցնէր , անոր քարացեալ ու ապականեալ սիրտը շարժելու անկարող էին . ստակ կը զրկէր որչափ որ սուզէին , բայց դառնալու խօսք մտիկ չէր ընէր :

Աւ հեղիւղներն , անդին , իրմէ քայլ մը հեռու , խնայողութեամբ ու զրկանքով ստակ հաւաքած , մաս առ մաս կը վերադառնային հայրենիք սխառն խօսքով ըլլալու :

Զ

Ձմեռանմուտին , Մարտիրոսի գիւղին շրջակայ գիւղերէն շատեր դարձան եկան . ամուսիններ , նշանածներ ու աղջիկներ խնդացին . գիւղայից ու ընտանեկան կեանքն իր բոլոր սուրբ ու մաքուր եռանդովը վերակենդանացաւ :

Սաշօն այս վերադարձողներէն էր . արտ մը ու զոյգ մը եզ գնելու չափ ստակ ժողվէր ու եկեր էր . նշանած իր արդէն ու հարսնիքը չուսուցցին Մարտիրոսի մէկ հօրեղբայրը կնքահայր եղաւ . ամէն-

քը կը սիրէին Սաշօն . ուրախութեան , տօնի օր մը եղաւ իր հարսանեաց օրը :

Չարդար հոն էր . իրեն ալ ճիշդ վեց տարի առաջ այսպէս ուրախութեամբ տօններ էին հարսնիքը . դրացի ու գիւղացի եկեր էին , այդ՝ ճիշդ այսօրուան պէս հազար քաղթանքներ ընելու : Բայց քանի մ'օր վերջը էրիկը ձգեր դասեր էր գինքն ու ալ չէր երեւցեր , և իր առանձնութիւնն ու լքումը ամօթ մը կը թուէր իրեն այս ցնձայող բազմութեան մէջ :

Ետ դարձան . հետեւեալ օրն իրենց ամայի տնակը բարձրովին մութ ու խաւար երեւցաւ իր աչքին :

Պոսէ տասներորդ անգամն ըլլալով սրտաբուխ ուխտով եկեղեցի վազեց ու Տիրամայրն պատկերին առջեւ սրտասուեւով իր խնդիրքն ըրաւ . և Տիրամայրն , արծաթէ թաղը զլիսուն , ունկնդրեց իր սեւցած ոսկեգօծ շրջանակէն , ինչպէս շատերուն աղաչանաց էր ունկնդրած :

Ապա ձեռն հասաւ իր բոլոր աստուկութեանն , իբրեւ թէ այս հայրենիք դարձողներուն յիշեցնելու համար որ յարմար ժամանակին հասած էին հայրենի վառարանը :

Աւ Պոսէն լուրեր , տեղեկութիւններ կուպային գիւղէ գիւղ անոնց վրայ որք այս այնան չէին կրցած միասին դառնալ . կարապետ յաջորդ տարին , իսկ կիրակուս միւսին պիտի գառնար : Միայն Մարտիրոսի վերադարձին խօսքը չի կար : Յետոյ ձիւն ու սառոյց ամէն կողմ , ամէն ոք իր տան մէջ փակուած , և այսպէս տարի մը եւս լրացաւ :

Ե

Բուռնութի վայելակազմ պահպանեն աղէկ ճամբու մէջ էր : Մորութիւնն ու ապականութիւնը սակուն զառ ի վայր մ'է որուն կէսին վրայ կանգ առնուլ դժուարին է :

Տարիները կ'անցնէին միշտ ու ինք : Բերայի փողոցներուն մէջ կը շրջէր թափառայած , միշտ մաքուր հագուած , անծիլուած , սեւ պեխերն ուրօրած ու հնդիկ իշխանի մը պէս պահելով իր հայրենի դգեստներն որք իրեն այնքան աղէկ կը վայլէին : Օր մը միայն փորձի համար եւրոպական հագուստներ գնեցած էր , և այն օրն ոչ ոք երեսը նայեր էր :

Հիմա Բերայի ամէն սովորութեանց, զբասանաց ու մուռութեանց տեղեակ մէկն էր. բաւական ատենէ ի վեր ահա կը վարէր գեղեցիկ ու առոյգ հսկայ մարդու գերը՝ իր անձին վրայ ամէն կերպ ենթադրութիւններով համակելով Բերայի կանանց ստեղծը:

Բայց այս կեանքը չ'էր կրնար տեսել այսպէս, իր ազգած հրապույրը վազանցիկ բաժն մ'ունէր եւ առջի հետաքրքրութիւնը կը նուազէր:

Նոր եկող պարզամիտ տղան չ'էր. բայց ի՞նչ օգուտ, հարուստ տիկնանց համակրութիւնը՝ ծառոց օտտերուն վրայ կեցող թռչուններուն պէս անհաստատ և:

Իր պաշտպանուհին ճամբած էր գինքն, ու խանութին մէջ հին օրերու վաստակին մէկ տասներորդէն անգամ չ'ունէր. հարան անցնին այդ վաճառատան մէջ գըտնուող բոլոր նիւթերուն ձեւակտադիրն էր, եւ ինքն ալ այդ նիւթերէն մին եղած էր բաւական ատեն: Սակայն վստահ չ'ալ յանձնապատասխան ձեւ մը ստանար էր ու իր երիտասարդութեան ատենէն մնացած վարժութեամբ մը, եթէ ոչ տիկնիներու գէթ կար կարողներու կամ ազգին անդին ստաներու մէջ աշխատող սպասուհիներու ետեւէն էր:

Յանկարծ հայրենիքէն թուղթ մը եկաւ որ բռնի կը յիշեցնէր իրեն մոռցած ու օտանկոտ բրած սրբապան պարտաւորութիւններն. այն բարակ պահարանին մէջէն ելլող քառածալ թուղթի կտորն անխուտափելի պարտաւ մ'էր ուսկից յակակամայ կ'ա շնար. այդ անզգայ փոքրիկ սուրհանդակն ընտանի եւ թնողը մարդու կերպարանք կ'առնուր եւ գինքն կը յանդիմանէր: Որքա՞ն արժանի էր այս յանդիմանութեանց. հետզհետէ կը տեսնէր որ անկարելի կը դառնար լեցնել այն ամօթոյ անդունդը զոր իր անառակ ու խայտառակ ընթացքովը բացեր էր. ի՞նչ երեսով պիտի դառնար հայրենիք. պն ատեն կը զղար ինքնիրեն ու որոշում կուտար երկիր երթալու. վաղա՛նցիկ ու անհաստատ որոշում զոր գործադրելու ոյժը չ'ունէր:

Իւ այսպէս կը համոզուէր որ Պոլիս մնայէ ուրիշ միջոց չիկար իրեն ու ժամանակը կ'անցնէր:

Օր մ'ալ զգաց որ տարիքն առնելու վրայ էր. սպիտակ թեւեր կ'երեւէին մազերուն մէջ. հայելին աւերեալ ցոյց կուտար իր գէմբին գիծերը: Զարմացաւ. ի՞նչ չուտ. ու երկու օր մտածեց ասոր վրայ. յետոյ գարծնալ շարունակեց իր առջի ընթացքը:

Հարեոզներուն ա'լ չ'էր ըսեր որ ամուսնացած է. բաւական ատենէ ի վեր վաճառատունէն ալ ելած էր ու գրամի նեղութիւն ունեցաւ:

Պարտիզակցի սպասուհի մը՝ վերջին մնացորդ իր նախկին յարաբերութիւններուն, աւելցուցած բոլոր ստակն, իր չորս հազար դրուչը կուտար իրեն եթէ գինքը կնութեան առնէր:

Մարտիրոս բռնակորութիւն ընելու ոյժ ե կամք չունէր. գործ մը բռնել կ'ուզէր ու գործն առանց գրամագլխի չ'ըլլար. ինքնիրեն ըսաւ նաեւ քանի որ երկիր չպիտի երթար, առանց կնոջ ապրիլն անկարելի էր:

Գաղտնի ու անձայն պսակուեցան, գողերու պէս, առանց Պարտիարքարանին լուր տալու, բարեկամ մը հրահրելու, ոսկի մը տուին քահանային ու խնդիր չի մնաց: Այս եղաւ իր վարած կեանքին սըրբապիղծ վերջաւորութիւնը:

Ը

Հայրենիքն իր կինը կ'սպասէր. ձմեռն ամառուան, ամառը ձմեռուան կը յաջորդէր, ու տարիները կ'անցնէին անփոյթ ու անտարբեր իր թախծալից ու սգաւոր կեանքին համար:

Պուլէն թուղթերը ցանցաւ ու ուշացած կուգային. ինչները չէին վճարուեր ա'լ ու աներն իր նամակներուն մէջ կ'ըսպառնար հարկը վճանուլ երբոր երկրորդ ֆուսն ալ անձար մնար. տանը մէջ ամէնքը գինքն յանցաւոր կը բռնէին էրկանը անտարբեր ընթացքին համար:

Գացողները օղբ շարունակէին Պոլիսէն դառնալ, ու պատանիներ կ'երթային պանդըխտութեան ստապապանաց պակասը լեցնելու:

Ու թուղթերը կը ըճամբէին գեղէն, բարեւերէ՛ ընտանեաց անդամներու ողջ առողջ ըլլալուն լուրէն եւ ստակ զրկելու

# Ի ՌՈՒՍԻԱ

յաւիտեանկան պահանջումէն բաղկացած : Պատասխան չի կար :

Հարն՝ հիմա կատարեալ կին եղած կրնար երբեմն անկիւն մը քաշուած արտասուել :

Ամէն կիրամուտքի եկեղեցի կ'երթար, կրակործան ու գիւղին տնակներուն օճա հին ու սեւցած եկեղեցի մը, ուր պղտիկուց ի վեր գացած էր եւ ուր իր պսակն օրհներ էին :

Հոն, արոց պատկերներուն դէմ զորս անմայն բայց անաշտ վկայներ կը կարծէր իր ամուսնութեան, իր տառապանքը կը պարզէր ու իր ջերմեանը աղօթքնեւրոյն որք յանդիմանութեան պէս բան մը կը նշանակէին, պատասխանատու բռնել կ'ուզէր այս եկեղեցին իր խորանովը, մասունքովը, բոլոր սուրբերովն, իր կործանեալ յոյսերուն համար :

Սակայն այս յաւիտեան բացակայ էրկանն համար ըրած աղօթքները չէին փոխեր բնաւ իր նսկատագիրն :

Այն ատեն հարկ կ'ըլլար համոզուիլ ու բարբորովին յոյսը կտրել այս ամէն ժամ ըստպատած ու ամէն ժամ ի գերեւ ելած վերադարձէն :

Գիտէր, ստոյգ գիտէր ալ որ ամուսինը չը պիտի գար, բայց երեկոյն, առանց ուզելու, քայլերը կ'առաջնորդէին զինքն այն արտն ուրիշ վերջին անգամ տեսած ու Պոլիս ճամբած էր իր երիտասարդ էրիկն : Հոն, կանգուն եւ աւանձին, հեռուն տարածուող ընդարձակ ու հարթ դաշտին վրայ պտտցնելով իր հետախոյզ նայուածքն, Այրին դեռ կ'սպասէր :

Գ. ՋՕՀՐԱՊ

## Խ Ա Ղ Ա Թ Ի Խ Ն

Եւ բզբեւնք գլխու մէջ : Մէկը իւր տան մէջ բռնեցու զայն, առանց ընդհանրելու իւր դարադմուկն : 80 սանդիկ զրկելով կ'ստացուի 132 երեսով գառակերպարք սեռեակ մը : Դիմել առ

M. Nicholson, 4, rue Drouot, Paris

Այն Պետութիւնն որու կը հպատակին մէկ միլիոնէ աւելի հայեր, որու իշխանութեան ներքեւ է մեր էլմիածինն, բոլորովին անանօթ է մեզ . ո՛չ երկիրն, ո՛չ օրէնքներն, ո՛չ բարքերը գիտենք . ուստի կը կարծենք օգտակար ըլլալ եթէ մերթ ընդ մերթ համառօտ տեղեկութիւններով զորս կը քաղենք Եւրոպացի մեծանուն հեղինակներէ—փոքր ի շատէ գաղափար մը տանք Ռուսիայի մասին :

Անասհման է հողն ի Ռուսիա : Այդ կայսրութեան տարածութիւնը 20.000.000 քառակուսի հազարամեդր է, որու 5/2 միլիոնը կը կազմէ եւրոպական Ռուսիան : Ուրեմն այդ եւրոպական Ռուսիան արդի ծրանայէն տասն եւ մէկ անգամ եւ արդի Իտալիայէն, կամ Բրիտանական երեք թագաւորութիւններէն տասն եւ հինգ, տասն եւ վեց անգամ աւելի մեծ է : Եւ այս լայնածաւալ երկրին ինն տասներորդը գրեթէ անմարդաբնակ է տակաւին . ոսկայն Ֆլաքեալ մասն ունի 100.000.000էն աւելի բնակիչ, կրկնապատիկ թիւն ամենէն աւելի ստուարաթիւ բնակիչ ունեցող միւս քրիստոնեայ Պետութեանց :

Այդ կայսրութեանն են հողազուտութիւնն աւելի ընդարձակածաւալ դաշտները, Սիւս աշխարհին մէջ այդ դաշտերը կը տարանջին միջեւ Կեդրոնական Ասիայի բարձրաբերձ լեռներն . Սեւ եւ Կասպից ծովերուն միջեւ կը յանգին ի հըսկայ լեռինս Կովկասու :

Այդ կայսրութեանն են Եւրոպիոյ ամենէն մեծ լիճերը, Լատուկա եւ Օնեկա . Ասիոյ ամենէն մեծ լիճը, Պայքալ . աշխարհիս ամենէն մեծ լիճերը, Կասպից ծովը եւ Արալ :

Իր գետերն ալ իր դաշտերուն կը համեմատուին . Ասիայի մէջ Օպի, Ենիսեյ, Լենա, Ամուր . Եւրոպայի մէջ Տեիէրբ, Տօն եւ Վոլկա . Ռուսիոյ կեդրոնական երակն եղող այդ Վոլկան իր հազար մղոն մտրորնթաց երկայնութեամբն կրնայ եւրոպական իսկ շհամարուիլ :

Եթէ ի նկատ անունը միայն եւրոպական Ռուսիան, Սառուցեալ Ովկիանտէն ի Կովկաս կրնանք հարցնել թէ արդե՞ր ստուիլ այս երկիրը մասն է եւ

րոպիոյ Եթէ կարեւորութիւն տանք շախարհագրական կազմութեան, և Երոպան կը սկսի Պայթիկ եւ Սեւ ծովերուն միջեւ, անդ ուր ցամաքը կը նեղնայ ։ Ռուսիա որ կը ծառայէ նմա իբր կիմկալուած է ալ ի ստիսական թանձոր հողազուհետին որուն երկարածքունն է ։

Ի հարուային յարեւելք չկան սահմանահատք Եւրոպական Ռուսիոյ և Ասիոյ միջեւ, և այս պատճառաւ է որ աշխարհագիրք իբր սահմանադրուի համարած են մերթ Տօնը, մերթ Վոլկան, մերթ Ուրալը կամ Եակը կամ տափարակն Օպի ։

Ռուսիա Եւրոպայէն կը տարբերի նաև իր աշխարհագրական կազմութեամբն, կլիմայովն և հողին ձեւազմամբը ։ Իր աշխարհագրական կազմութեամբն Եւրոպա ծովերով բաժնուած է մասերու, և իր կլիման բարեխառն է, մեծ մասամբ շնորհիւ այդ բաժանումներուն ։ Այս երկու առաւելութիւններովն է որ Եւրոպա հողագնտին միւս ամէն մասերէն աւելի յարմարն է քաղաքակրթութեան բնազայրը լինելու ։ Ռուսիա զուրկ է Եւրոպիոյ այս բնական առաւելութիւններէն ։ Իր ամէնէն ընդարձակ տարածութեան մէջ կըցուած է Ասիոյ ։ հիւսիսէն և հիւսիսայինարեւելքէն փակուած է ծովերով որք սակայն շնորհիւ իրենց սառույցներուն չեն պարզուեր Ռուսիոյ ծովեզերեայ երկրի մը բարիքներն ։ Այսպէս Ռուսիա մեր գունտին ամէնէն աւելի չո՞ծ և գերազանցապէս ցամաքային մի երկիրն է ։

Այսպիսի կազմակերպութեամբ Ռուսիա զրկուած է Եւրոպիոյ ծովեզերեայ բարեխառն կլիմայի առաւելութիւններէն ։ Բոլորովին ցամաքային կլիմա ունի այսինքն, ձմեռը ծայրայեղ ցուրտ, ամառը ծայրայեղ տաք ։ Մովերն որ զայն կը թանտն կամ շատ հեռու են կամ շատ փոքր որպէսպիսաբանութեան պահարաններ կամ զովութեան հովիտներ լինին ։ Արեւմուտքի մէջ, լայնութեան մի եւ նոյն աստիճանին ներքեւ ոչ ուրեք կը տրիէ այնքան խստաշունչ կամ երկարատեւ ձմեռ, կամ այնպիսի կիզիչ ամառ ։

Ռուսիա բնա չօգտուիր բնութեան այն մեծ ազդեցութիւններէն որք կը ջնդուցանեն Եւրոպիոյ մնացեալ մասը ։ ոչ կուլթ Սոքրիսի հոսանքն, ոչ Սահարայի հողեզեր չեն նպաստեր նմա ։ Աջանսինապեան երկարածիք թերակիզին որ կը յառաջանայ Ատլանտեան Ովկիանոսին

և Ռուսիոյ միջեւ կը հեռացնէ անոր ափերէն տաք ջուրի մեծ գետը զոր նոր Ախարհը կը յղէ առ Հինն Փոխան կուլթ Սթրիսի, կամ Արիւրիկեան անապատներուն կը տիրապետեն Ռուսիոյ վրայ բեւեռի սառույցներն, Սիպերիան, Ասիոյ Հիւսիսային մասը ։ Եւ հիւսիսային հողմերուն գէժ պատասպարան մը գտնելու համար պէտք է որ Ռուսիա իջնէ մինչեւ ի կովկաս ։ Իսկ տափարակ, ցածցած հողն անպատասպար կը թողու զայն մթնոլորտին ամէն հոսանքներուն, Ասիոյ կեդրոնի անապատներու քօսացուցիչ փշուռներուն ինչպէս նաև բեւեռային շրջանակի հողերուն գէժ ։

Հետեւեալ և հետեւաբար հովիտներու բացակայութիւնը մին է այն կենսական գծերէն որք հիմնական կերպով կը զանազանեն ռուսական բնութիւնը և Եւրոպական բնութեանէն ։ Ռուսիոյ հողը հորիզոնական է, և դիպուածական չէ այլ երկրին աշխարհագրական և երկրաբանական մէկ յատկանիշն է ։ Կեղեւին տափարակութիւնը ոչ այլ ինչ է, բայց թէ՛ ընդերկրայ խաւերուն կանոնաւոր զուգահեռականութիւննց արդիւնքն ։ Երկրաբանական զանազան յարկերը փոխանակ յաճախ մակերեւոյթին վրայ երեւալու ինչպէս յարեւմուտս, և ընծայելու տեսարաններն, հողերու, մշակութիւններու պէսպիսութիւն մը, կը մնան հորիզոնական ձեւերով իրարու վրայ դիզուած, և անհուն տարածութեանց վրայ կը երկրայացնեն միեւնոյն հողերն յարմար միեւնոյն մշակութիւններու ։ Երկրաբանական կազմութիւններն ունին այնպիսի տարաբարութիւն մը, խաւերու շարքերն այնպիսի կարծրացումներովն մը, ապառաժներն այնպիսի միակերպութիւն մը որոյ նմանը յարեւմուտս ոչ ուրեք կայ ։ Այս նպաստաւ մակերեւոյթին համար կարելի է ըսել որ անոր երկրային կեղեւն զերծ մնացեր է այն ուժգին սասանութիւններէն որք թողած են այնքան հեռքեր Եւրոպիոյ միւս կէսին վրայ ։ Մովէն կամայ կամայ վեր ելած երկիրները կը պահպանեն տակաւին այդ ծովու պատկերն, քստմնածածան իրենց անհուն տափարակութեան մէջ ։

Վասն Արտօնատեանն  
Տնօրէն-Պատասխանատու  
Ս. ՏԱՄԱՏԵԱՆ